

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՄՈԴԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐՆՈՒՄ

### ՍՈՆՅԱ ԹԱՐԱՂՅԱՆ

Գերմաներենի հիմնական բառապաշարում իրենց ուրույն տեղն ունեն մոդալ բայերը: Այդ կարգը կարծես թե համեմունքի դեր է կատարում և կարող է արտահայտել անվիճելիության, հրամանի, հավանականության, անհավանականության, ցանկության, անհրաժեշտության, ստիպողականության և այլ իմաստներ: Նրբերանգային նշված ամբողջությունն էլ կազմում է մոդալության (եղանակավորություն) համակարգը, որն արտահայտում է խոսքի բովանդակության և իրողության փոխհարաբերություն: Թվարկված բոլոր նշանակություններից բացի, մոդալ բայերն ունեն մաս ենթադրության և հնարավորության իմաստներ: Այս կարգն արտահայտվում է գերմաներենին հատուկ ներքին կանոններով: Ըստ այդմ էլ կարելի է նշել, որ դրանք ունեն խոնարհման առանձնահատուկ համակարգ: Այդ կարծիքին է լեզվաբան Ե.Կրաշեննիկովան<sup>1</sup>: Մոդալ բայերը, որպես կանոն, *Präsens* (ներկա) ժամանակի 1-ին և 3-րդ դեմքերում չունեն դիմային վերջավորություն, եզակին կազմվում է արմատական ձայնավորի փոփոխությամբ: Բոլոր *ուժեղ խոնարհման* բայերի անցյալ կատարյալ ձևերը (*Präteritum* կամ *Imperfekt*) կազմվում են ճիշտ այդպես: Այսինքն՝ մոդալ բայերի ներկան կազմվում է այնպես, ինչպես «ուժեղ» բայերն են կազմում իրենց անցյալ ժամանակը, այստեղից էլ «պրետերիտո-պրեզենտային» անվանումը:

Օրինակ՝

|      | Singular                                                                                                | Plüral     |        |     |    |            |
|------|---------------------------------------------------------------------------------------------------------|------------|--------|-----|----|------------|
| 1-ին | ich soll                                                                                                | Wir sollen |        |     |    |            |
| 2-րդ | du sollst                                                                                               | ihr sollt  |        |     |    |            |
| 3-րդ | <table><tr><td>er</td><td rowspan="3">} soli</td></tr><tr><td>sie</td></tr><tr><td>es</td></tr></table> | er         | } soli | sie | es | sie sollen |
| er   | } soli                                                                                                  |            |        |     |    |            |
| sie  |                                                                                                         |            |        |     |    |            |
| es   |                                                                                                         |            |        |     |    |            |

Ժամանակակից գերմաներենում մոդալ բայերը յոթն են՝ können, dürfen, mögen, wollen, sollen, müssen, lassen:

<sup>1</sup> См. Крашениникова Е., Модальные глаголы в немецком языке, М. 1954, т. 3:

Մի քանի մոդալ բայերի օրինակով ծանոթանանք դրանց թարգմանության առանձնահատկություններին և հնարավոր իմաստներին:

*Mögen* բայը հին վերին գերմաներենում նշանակել է *ուժ* և առաջացել է *magen* բայից: Բացի իր բառային իմաստից, ունի մակ քերականական բովանդակություն՝ զիջողականության, հնարավորության, անուղղակի խնդրանքի: Այս մոդալ բայը ձեռք է բերել իմաստի լայնացում և բազմիմաստություն: Այսպես՝

1. Կարողանալ

Woher mag er das erfahren haben. Որտեղից կարող էր նա այդ իմանալ:

2. Սիրել

Ich mag diese Suppe. Ես սիրում եմ այս ապուրը:

3. Ցանկություն ունենալ

Ich möchte Klavier spielen. Ես ուզում եմ դաշնամուր նվագել:

4. Անուղղակի խնդիր

Möge er sofort gehen. Թող նա անմիջապես գնա:

5. Հնարավորություն, ենթադրություն

Er mag krank sein Նա, հնարավոր է, հիվանդ լինի:

*Können* և *mögen* մոդալ բայերը կարող են արտահայտել սուբյեկտիվ գգուշական ենթադրություն: Օրինակ՝ Der Viehbestand kann 90 Tiere betragen – Անասունների գլխաքանակը, երևի, 90 է:

Diese Frage mag schon gelöst werden- Այդ հարցը, հնարավոր է, արդեն լուծվում է:

*Sollen* մոդալ բայը հին վերին գերմաներենում արտահայտել է ապառնիության, պարտավորվածության գաղափար: Հենվելով ուրիշի խոսքի վրա՝ կարող է արտահայտել ապառնիում կատարվելիք ցանկություն, հրաման: «Sollen»-ը ևս բազմիմաստ բայ է, արտահայտում է՝

1. Պարտավորվածություն. այս դեպքում հանդես է գալիս մեկ ուրիշ բայի անուղղակի ձևի հետ: Օրինակ՝

Ich soll einen Brief an sie abgeben. Ես պետք է նրան մամակ հանձնեն:

2. Ստիպողականություն

Das sollte er doch wissen. Դա պետք է նա իմանա:

3. Հնարավորություն

Wenn er wirklich sein Ziel erreichen sollte, wurde es mich freuen. Եթե նա իսկապես իր նպատակին հասնի, դա ինձ կուրախացնի:

4. Ուրիշի խոսքի շեշտադրում

Er soll hier gewesen sein. Ասում են՝ նա այստեղ պետք է լինի:

Sollen մոդալ բայը արտահայտում է մակ ապառնիում կատարվելիք գործողություն: Մակայն մոդալ ապառնին տարբերվում է քերականական ապառնիից նրանով, որ պահպանում է ինքնուրույնության երանգ, օրինակ՝

Was sollte nur jetzt aus ihm werden. Ի՞նչ կստացվի դրանից:

Այս ձևը շատ կիրառելի է, և դրա վրա իր ազդեցությունն է թողել հյուսիսային բարբառը (դիալեկտ), որտեղ մոդալ ապառնին քերականական երևույթ է համարվում:

Այս բայն ավելի ստույգ՝ ոչ թե ենթադրություն է արտահայտում, այլ ինչ-որ մեկի ասածի հիման վրա տեղեկություն է պարունակում: Օրինակ՝ Die Prifite des Unternehmens sollen im kommenden Jahr steigen, so die Verwaltung. Ադմինիստրացիայի հաղորդագրությունից ելնելով՝ ֆիրմայի եկամուտները գալիք տարում կաճեն:

*Sollen* մոդալ բայը կարող է հանդես գալ անորոշ I-ի հետ ինչպես ակտիվում, այնպես էլ պասիվում: Օրինակ՝ Die beitrtrittswilligen Länder sollen die Konfergenzbedingungen erfüllen, um in die Währungsunion aufgenommen zu werden. Արժութային միության մեջ մտնել ցանկացող երկրները պետք է կատարեն համաձայնագրի (կոնվենցիայի) պայմանները....

Պայմանի երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություններում, եթե նշված երկրորդական նախադասությունները կապված են *falls* կամ *wenn* շաղկապներով, *sollen* բայը, պարտավորության գաղափարի առումով, կարող է երաշխավորության իմաստ ձեռք բերել: Falls (Wenn) der Vertrag zu günstigen Bedingungen abgeschlossen werden sollte, könnten wir mehr Geräte beziehen. Այն դեպքում, երբ ավելի հարմար պայմաններով պայմանագիր կնքվի, մենք կկարողանանք ավելի շատ սարքավորումներ գնել:

*Lassen* մոդալ բայը կարող է հանդես գալ և՛ անկախ, և՛ ուրիշ բայերի անորոշ (Infinitiv) ձևերի հետ միասին: Ահա այս դեպքում է միայն արտահայտվում նրա մոդալության գաղափարը: Կարող է արտահայտել ցանկություն, հարկադրանք, կասկածանք, թույլտվություն, հնարավորություն: Այս բայը կարող է հանդես գալ նաև որպես բաղադրյալ ստորոգյալի մաս: Բերենք մի քանի օրինակ՝

Sie haben mich einmal ausreden lassen (թույլտվություն). Դուք ինձ ոչ մի անգամ չթողեցիք ճառել (խոսել):

Laß uns, jeder für sich, die Sache mal überlegen (խնդրանք, հրաման). Թույլ տուր, որ մեզանից յուրաքանչյուրը գործը յուրովի գլուխ բերի:

Որպես լիմաստ բայ է հանդես գալիս քարացած դարձվածքներում: Օրինակ՝ Am Leben lassen մահանալ: Außer Acht lassen ուշադրություն չդարձնել: Aus dem Spiel lassen - խաղը թողնել:

*Dürfen* մոդալ բայն արտահայտում է թույլտվություն ստանալու իմաստ: Օրինակ՝ Darf ich hinaus gehen? Կարո՞ղ եմ դուրս գնալ:

Այս բայը ըղձականի անցյալ ժամանակային ձևում արտահայտում է հարգալից, զգուշավոր ենթադրություն: Օրինակ՝ Die Produktionskosten dürfen die Erlöse übersteigen. Արտադրական ծախսերը, հավանաբար, կավելացնեն հասույթը:

*Wollen* մոդալ բայն արտահայտում է ցանկություն: Օրինակ՝ Ich will hier sitzen. Ես ուզում եմ նստել այստեղ:

Արտահայտում է նաև կասկածելիության և նույնիսկ խաբեության երանգ պարունակող ենթադրություն, որը կարող է թարգմանվել «իբր թե» եղանակավորող բառով:

Der Vertreter des Betriebs wollem zahlreiche Reinigungsanlagen in der Produktion verwenden. Արտադրության ներկայացուցիչները, իբր թե, արտադրության մեջ կիրառում են բազմաթիվ մաքրող սարքեր:

*Müssen* մոդալ բայն արտահայտում է անհրաժեշտության գաղափար: Հաճախ կիրառվում է ամորոշ II-ի հետ: Օրինակ՝ Na, das muß komisch aussehen haben<sup>2</sup> Այո, դա, երևի, շատ ծիծաղելի տեսք է ունեցել:

*Müssen* մոդալ բայը հանդես է գալիս մաս *werden* օժանդակ բայի հետ, և սովյալ դեպքում *werden*-ն էլ ձեռք է բերում մոդալության նշանակություն, և երկուսը միասին արտահայտում են հաստատուն ենթադրություն, որն ունի տրամաբանական հիմք: Օրինակ՝ Die Lagerstätten der nordlichen Industrieländer müssen als strategische Reserve gehalten werden. Հյուսիսային արդյունաբերական երկրների օգտակար հանածոների պաշարները, հնարավոր է՝ պահպանվում են որպես ռազմավարական պահուստ:

Մոդալ բայերի թարգմանության ժամանակ մեզ հիմնականում օգնության են գալիս հայերենի եղանակավորող բառերը:

Անչափ կարևոր է մաս մոդալ բայերի ճիշտ թարգմանության ուսուցումը: Դրա համար բուհերում ուսուցանվող նյութը պետք է ներառի բառային, քերականական և հնչյունաբանական վերլուծություն: Ուսանողներն այս ամենը պետք է յուրացնեն համալիր ձևով: Հենց դրանով էլ բնորոշվում են օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության առանձնահատկությունները: Դրանցից մեկն էլ այն է, որ մոդալության կարգը կարելի է արտահայտել մաս, այսպես կոչված՝ «համեմունք» բառերի (մոդալ բառ-մասնիկների) միջոցով, որոնք գերմաներենում անվանում են մոդալ-փարտիքլներ (Modalpartikeln): Դրանց հետ մեկտեղ, գերմաներենի քերականության մեջ կարող ենք հանդիպել նշված «համեմունք» բառերի այլ անվանումների, այսպես՝ Abtonungspartikeln, Würtzwörter, Füllwörter և այլն: Այդպիսի բառերից են, օրինակ՝ Vielleicht, auch, bloß, doch, gemäß, eben և այլն: Այս բառերից շատերը (aber, doch, denn և այլն) հանդես են գալիս մաս որպես շաղկապներ: Սակայն դա արդեն այլ թեմա է:

**СОНЯ ТАБАГЯН – Категория “модальности” и связанные с ней особенности перевода в немецком языке.-** В немецком языке категория “модальности” выражается посредством модальных глаголов, модальных предикатных слов и модальных фюрунгов. Модальные глаголы как грамматические формы выражают разные эмоциональные оттенки и имеют свои языковые особенности, особую систему спряжения. В немецком языке модальными глаголами являются «können», «mögen», «sollen», «lassen», «müssen», «wollen».

<sup>2</sup> Stü Bredel W., Verwandte und Bekanute, S.110:

SONYA TABAGHYAN – *Category of “modality” and characteristics of its translation in the German language.*- The category of modality in the German language is expressed through modal verbs, modal predicative words and modal particles. As grammatical forms, modal verbs express various emotional shades, have specific language peculiarities, a special system of conjugation. Modal verbs in the German language are: “können”, “mögen”, “müssen”, “dürfen” “wollen”, “lassen”, “sollen”